

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հայտեր ներկայացնելու հրավեր (ՀՆՀ)

Ապրանքներ

(Մեկ ծրարով մրցութային գործընթաց)

Երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն

Ծրագրի անվանումը՝ «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում»

Պայմանագրի անվանումը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի համար ճառագայթային ախտորոշման, լաբորատոր ախտորոշման, վիրահատական և հիվանդանոցային, ընդհանուր հիվանդանոցային և պոլիկլինիկական սարքավորումների, ինչպես նաև բժշկական կահույքի ձեռքբերում, ներառյալ տեղադրում, մեկնարկ և ուսուցում՝ բաղկացած 5 լոտից (չափաբաժնից)

Վարկ No.:9202-AM

ՀՆՀ հղում No.:CR5/AF/RFB/B-G/001-22

1. Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել Համաշխարհային Բանկից՝ «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի ծախսերը հոգալու համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի համար ճառագայթային ախտորոշման, լաբորատոր ախտորոշման, վիրահատական և հիվանդանոցային, ընդհանուր հիվանդանոցային և պոլիկլինիկական սարքավորումների, ինչպես նաև բժշկական կահույքի ձեռքբերում, ներառյալ տեղադրում, մեկնարկ և ուսուցում՝ բաղկացած 5 լոտից (չափաբաժնից), CR5/AF/RFB/B-G/001-22 պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:
2. Սույնով ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» Պետական Հիմնարկը հրավիրում է իրավասու Հայտատուներին՝ ներկայացնելու կնքված հայտեր հետևյալ գնման համար՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի համար ճառագայթային ախտորոշման, լաբորատոր ախտորոշման, վիրահատական և հիվանդանոցային, ընդհանուր հիվանդանոցային և պոլիկլինիկական սարքավորումների, ինչպես նաև բժշկական կահույքի ձեռքբերում, ներառյալ տեղադրում, մեկնարկ և ուսուցում՝ բաղկացած 5 լոտից (չափաբաժնից), CR5/AF/RFB/B-G/001-22

Լոտ-1. ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի համար ճառագայթային ախտորոշման սարքավորումների ձեռքբերում, ներառյալ տեղադրում, մեկնարկ և ուսուցում, CR5/AF/RFB/B-G/001-22/1

Լոտ-2. ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի համար լաբորատոր ախտորոշման սարքավորումների ձեռքբերում, ներառյալ տեղադրում, մեկնարկ և ուսուցում, CR5/AF/RFB/B-G/001-22/2

Լոտ-3. ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի համար վիրահատական և հիվանդանոցային սարքավորումների ձեռքբերում, ներառյալ տեղադրում, մեկնարկ և ուսուցում, CR5/AF/RFB/B-G/001-22/3

Լոտ-4. ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի համար ընդհանուր հիվանդանոցային և պոլիկլինիկական սարքավորումների ձեռքբերում, ներառյալ տեղադրում, մեկնարկ և ուսուցում, CR5/AF/RFB/B-G/001-22/4

Լոտ-5. ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի համար բժշկական կահույքի ձեռքբերում, ներառյալ տեղադրում, մեկնարկ և ուսուցում, CR5/AF/RFB/B-G/001-22/5

Որակավորման չափանիշները ներառում են (սակայն չեն սահմանափակվում*).

(ա) Ֆինանսական կարողունակություն. Հայտատուն պետք է ներկայացնի աուդիտ անցած ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններ կամ, եթե նման պահանջ նախատեսված չէ Հայտատուի երկրի օրենսդրությամբ, Գնորդի համար ընդունելի այլ ֆինանսական հաշվետվություններ՝ Հայտերի ներկայացման վերջնաժամկետին նախորդող վերջին երեք տարիների (2019-2021) համար, որոնք պետք է ցույց տան Հայտատուի ընթացիկ կայուն ֆինանսական վիճակը: Համատեղ ձեռնարկությունների դեպքում այս պահանջը պետք է բավարարի վերջինիս յուրաքանչյուր անդամը:

(բ) Նմանատիպ փորձ. Հայտատուն պետք է ներկայացնի հաջողությամբ ավարտված առնվազն մեկ (1) կամ երկու (2) պայմանագիր բժշկական սարքավորումների մատակարարման վերաբերյալ՝ Լոտ-1-ի, Լոտ-2-ի, Լոտ-3-ի և Լոտ-4-ի համար, ինչպես նաև առնվազն մեկ (1) կամ երկու (2) պայմանագիր բժշկական սարքավորումների կամ բժշկական կահույքի մատակարարման վերաբերյալ՝ Լոտ-5-ի համար, սկսած 2019թ. հունվարի 1-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուրը ստորև ներկայացված արժեքով՝ ըստ լոտերի, որոնք հաջողությամբ և էականորեն ավարտվել են (համատեղ ձեռնարկությունների դեպքում այս պահանջը պետք է բավարարվի վերջինիս բոլոր անդամների կողմից միասին, ինչպես նաև յուրաքանչյուր գործընկեր պետք է ներկայացնի ներքոնշյալ որևէ արժեքով առնվազն մեկ պայմանագիր):

Լոտ-1. CR5/AF/RFB/B-G/001-22/1

Մեկ պայմանագիր՝ առնվազն US\$440,000.00 (ներառյալ հարկերը) արժեքով, կամ երկու պայմանագիր՝ յուրաքանչյուրն առնվազն US\$220,000.00 (ներառյալ հարկերը) արժեքով:

Լոտ-2. CR5/AF/RFB/B-G/001-22/2

Մեկ պայմանագիր՝ առնվազն US\$44,000.00 (ներառյալ հարկերը) արժեքով, կամ երկու պայմանագիր՝ յուրաքանչյուրն առնվազն US\$22,000.00 (ներառյալ հարկերը) արժեքով:

Lnum-3. CR5/AF/RFB/B-G/001-22/3

Մեկ պայմանագիր՝ առնվազն US\$275,000.00 (ներառյալ հարկերը) արժեքով, կամ երկու պայմանագիր՝ յուրաքանչյուրն առնվազն US\$137,500.00 (ներառյալ հարկերը) արժեքով:

Lnum-4. CR5/AF/RFB/B-G/001-22/4

Մեկ պայմանագիր՝ առնվազն US\$80,000.00 (ներառյալ հարկերը) արժեքով, կամ երկու պայմանագիր՝ յուրաքանչյուրն առնվազն US\$40,000.00 (ներառյալ հարկերը) արժեքով:

Lnum-5. CR5/AF/RFB/B-G/001-22/5

Մեկ պայմանագիր՝ առնվազն US\$98,000.00 (ներառյալ հարկերը) արժեքով, կամ երկու պայմանագիր՝ յուրաքանչյուրն առնվազն US\$49,000.00 (ներառյալ հարկերը) արժեքով:

Նմանադիպ փորձը կդիտարկվի յուրաքանչյուր լուրի համար առանձին, ինչը նշանակում է, որ մեկից ավելի լուրերի համար հայտ ներկայացնող Հայտատուները պետք է սույն պահանջը բավարարեն կումուլյատիվ սկզբունքով:

(գ) Արտադրության փորձառություն և տեխնիկական կարողություն. Պայմանագր(եր)ով նախատեսված այն ապրանքների համար, որոնց դեպքում Հայտատուն հանդես է գալիս որպես արտադրող, վերջինս պետք է ներկայացնի փաստաթղթային հիմնավորում առ այն, որ ունի առնվազն հինգ (5) տարվա նմանատիպ բնույթի և բարդության ապրանքների արտադրության փորձ:

()Որակավորման պահանջների վերաբերյալ լրացուցիչ մանրամասները ներկայացված են Հայտեր ներկայացնելու հրավերում (Բաժին III – Գնահատման և որակավորման չափորոշիչներ):*

3. Հայտատուները կարող են հայտ ներկայացնել մեկ կամ մի քանի պայմանագրերի համար՝ համաձայն Հայտեր ներկայացնելու հրավերում սահմանված կարգի: Այն Հայտատուները, ովքեր կցանկանան զեղչեր առաջարկել մեկից ավելի պայմանագրով շնորհված լինելու համար, կարող են դա անել, պայմանով, որ այդ զեղչերը ներառված լինեն Հայտի Նամակում:
4. Մրցույթն իրականացվելու է միջազգային **բաց մրցույթ** ընթացակարգով՝ օգտագործելով «Հայտեր ներկայացնելու հրավերը» (ՀՆՀ), ինչպես նախատեսված է Համաշխարհային բանկի «**Համաշխարհային Բանկի գնումների կանոնակարգեր ՆԾՖ փոխառուների համար/ «World Bank Procurement Regulations for IPF Borrowers» [հուլիս 2016թ., վերանայված նոյեմբեր 2017 և օգոստոս 2018]** փաստաթղթով («Գնումների կանոնակարգեր») և բաց է բոլոր իրավասու Հայտատուների համար՝ համաձայն Գնումների Կանոնների:
5. Հետաքրքրված իրավասու Հայտատուները կարող են ներբեռնել մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթն անգլերեն լեզվով www.gnumner.am կայքից (տես՝ «Գնումների հայտարարություններ»–«Ծրագրի իրականացման գրասենյակների կողմից կատարվող գնումների մասին հայտարարություններ և հրավերներ» բաժինը) կամ հետևյալ էլ.փոստի հասցեներին գրավոր հարցում ուղարկելու միջոցով՝ info@healthpiu.am և procurement@healthpiu.am:

Հայտնում ենք, որ ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» Պետական Հիմնարկը պատասխանատվություն չի կրում Հայտատուի կողմից վերոնշյալ կայքից մրցութային փաստաթղթերի սխալ կամ ոչ ամբողջական ներբեռնման, ինչպես նաև Հայտեր ներկայացնելու հրավերում կատարվող հետագա լրացումների/փոփոխությունների բացթողնման համար:

6. Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ներքոնշյալ հասցեում մինչև **2022թ-ի հուլիսի 22-ը, ժամը 15:00 (տեղական ժամանակով)**: Էլեկտրոնային տարբերակով հայտերի ներկայացում **չի թույլատրվում**: Ուշացած հայտերը կմերժվեն: Հայտերի բացումը տեղի կունենա հրապարակային, Հայտատուների կողմից նշանակված ներկայացուցիչների, ինչպես նաև ներկա գտնվել ցանկացող բոլոր անձանց ներկայությամբ՝ ստորև նշված հասցեում **2022թ-ի հուլիսի 22-ին, ժամը 15:00 (տեղական ժամանակով)**:
7. Բոլոր Հայտերը պետք է ուղեկցվեն «**Հայտի ապահովման հայտարարագրով**»:
8. Հայտերի ներկայացման հասցեն է՝

ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» Պետական Հիմնարկ
Տնօրեն՝ պրն. Երվանդ Էլիբեկյանին,

Կոմիտասի պող. 49/4, ՀՀ ք. Երևան 0051 (5-րդ հարկ)

Հեռ. (+374 10) 29 75 36, (+374 10) 29 75 37

Էլ. փոստ՝ info@healthpiu.am, procurement@healthpiu.am, kristine.ghambaryan@healthpiu.am

www.healthpiu.am